ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հունվարի 3-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Նոր տարվա առթիվ այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ տիար Ֆադեյ Սարգսյանին:

Մայր Աթոռից Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր հոգեշնորհ Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ տիարք Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը Կառավարական տան մուտքի առջև դիմավորեցին Նորին Սրբությանը և առաջնորդեցին ընդունելությունների սրահ, որտեղ Վեհափառ Հայրապետին ջերմորեն ընդունեց մեծահարգ նախագահ Ֆադեյ Սարգսյանը:

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետի և մեծահարգ նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ ամանորյա փոխադարձ բարեմաղթություններով:

Ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ տիար Հրաչիկ Վարդանյանը: